Արձանագրություն N 11
ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 մայիսի 2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը.

Հանձնաժողովի և մասնագիտական խմբի անդամներ՝ Կ. Ալեյանը, Մ. Վարդանյանը, Ս. Կարապետյանը և Ս. Միրոյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին**

---

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի «Օրվա կարգավորման ջրավազանների կառուցման և վերակառուցման» նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 2-րդ փուլին մասնակից կազմակերպությունների հայտերի բացման մասին:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

**Սահմանված ժամկետում «ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «Մոդուլ» ՍՊԸ | ք. Երևան, Ն. Զարյան 22-3, հեռ. 011201511, +37477772670 | info@modul.am |
| «Ջինջ» ՍՊԸ | ք. Երևան, Չոլակյան 38, հեռ. +37410246023 | info@jinjconsult.com |
| «ՀԳՇՆ» ՍՊԸ | ք. Երևան, Կիևյան 16, հեռ. 010274307 | hgsnvh@gmail.com |
| «Թուսաբ Քնսալթինգ Ինջինիյիրս Քամփնի» ՍՊԸ «Toossab Consulting Engineers Company» LTD | Razavi Khorasan Province, Mashad, Qaleh Abukh, No 14, Payam St, No 4th +985137007254, +985137007240 | chinpartner13@gmail.com, contracts@toosab.net arturparanyan@mail.ru |

Ջրային կոմիտեի կարիքների համար խորհրդատվական ծառայություններ ձեռքբերելու նպատակով կազմակերպված «ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով հայտերը բացվել են 2022 թվականի մայիսի 23-ին, ժամը 15:00-ին:

| Մասնակցի անվանումը | Մասնակցության Չափաբաժնի համարը |
|---|---|
| «Մոդուլ» ՍՊԸ | 1, 2, 3, 4 |
| «Ջինջ» ՍՊԸ | 1, 2, 4 |
| «ՀԳՇՆ» ՍՊԸ | 1, 3, 4 |
| «Թուսաբ Քնսալթինգ Ինջինիյիրս Քամփնի» ՍՊԸ «Toossab Consulting Engineers Company» LTD | 1, 2, 3, 4 |

**Մասնակիցների կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և ուսումնասիրության վերաբերյալ**

---

- «Թուսաբ Քնսալթինգ Ինջինիյիրս Քամփնի» ՍՊԸ «Toossab Consulting Engineers Company» LTD ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է
- Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակցի կողմից ներկայացված չէ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների ռեզյումեները, անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (CV, դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

Անհրաժեշտ է, որ անձնակազմում ներգրավված՝ <<ծրագրի ղեկավար>> և <<Ինժեներ – հիդրոտեխնիկ-նախագծող>> մասնագետները ներկայացվեն առանձին՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար:

- Աշխատակազմի մասին տվյալներ՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ի <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյունակը լրացված է թերի, լրացված չէ մասնագետների կատարված աշխատանքները:
- Համաձայն հրավերի 1.3 կետի՝ Փաստաթղթերը օտար լեզվով (ռուսերեն կամ անգլերեն) ներկայացվելու դեպքում՝ հայերեն համարժեք թարգմանությունները ապահովում է հայտատուն: Բնօրինակի հայերեն և այլ լեզվով ներկայացված տարբերակի միջև անհամապատասխանությունների դեպքում հայերեն լեզվով բնօրինակն ունի գերակայություն: Հրավերի 1.3 կետի դրույթները պահպանված են մասամբ:
-

«Մոդուլ» և «Ջինջ» ՍՊԸ-ների ներկայացված հայտում ներկայացված է <<ծրագրի ղեկավար>> և <<Ինժեներ – հիդրոտեխնիկ-նախագծող>> 1 ական առանձին մասնագետ, սակայն նշված չէ, յուրաքանչյուրը որ Չափաբաժնի մասով է ներկայացված:

**Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

---

Հանձնաժողովը որոշեց.

«ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի 8.8 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը (27.05.2022թ.) և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 30.05.2022թ. շտկել անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | | Ա. Օհանյան |
| անդամներ | | Կ. Ալեյան |
| | | Մ. Վարդանյան |
| | | Ս. Կարապետյան |
| | | Ս. Միրոյան |
| Քարտուղար | | Ա. Սարգսյան |